ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 35** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի մասին

«Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 14 հավելված) 4-րդ կետի կատարման նպատակով եվ ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2015-2016 թվականների մակրոտնտեսական քաղաքականության՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 11 որոշմամբ հաստատված հիմնական կողմնորոշիչների իրագործման արդյունքների մասին հաշվետվությունը (կցվում է որպես տեղեկատվական նյութ)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է) եվ ներկայացնել այն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեվսկի	Բ. Սագինտաեվ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների մասին

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

2. Առաջարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին մակրոտնտեսական քաղաքականություն վարելիս հաշվի առնել սույն Որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ անցկացնել մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում Եվրասիական տնտեսական

միության անդամ պետությունների կողմից իրագործվող միջոցների դիտանցում եվ գնահատել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության՝ սույն Որոշմամբ հաստատված հիմնական կողմնորոշիչներին այդպիսի միջոցների համապատասխանությունը:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2016 թվականի
-ի թիվ որոշմամբ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր) համապատասխան մշակված եվ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 28 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններով սահմանված նպատակների իրագործմանն ուղղված սույն փաստաթղթով սահմանվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) տնտեսությունների համար 2016-2017 թվականների առավել կարեվոր կարճաժամկետ եվ միջնաժամկետ խնդիրներ, ինչպես նաեվ այն ներառում է դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ:

2015 թվականին անդամ պետությունների տնտեսական զարգացումը տեղի էր ունենում տնտեսական իրադրության բացասական միտումների աճի պայմաններում, ինչը հանգեցրել է ներքին անհավասարակշռությունների խորացմանը եվ ազգային տնտեսությունների խոցելիության մակարդակի ավելացմանը:

Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի նվազեցումը հումքային ռեսուրսների արդյունահանման ծավալների պահպանման ֆոնին ավելացրել է անդամ պետությունների կողմից արտահանվող նավթի եվ հիմնական հումքային ապրանքների գների նվազեցման միտումը:

2015 թվականին էներգակիրների, մետաղների եվ գյուղատնտեսական արտադրանքի համաշխարհային գները նկատելիորեն նվազեցին, ինչն այդ ապրանքների նկատմամբ պահանջարկի անկման ֆոնին ու ազգային տնտեսությունների՝ ներմուծումից բարձր կախվածության պահպանման պայմաններում հանգեցրեց արտահանման եկամուտների զգալի կրճատմանը եվ բացասական ազդեցություն գործեց անդամ պետությունների վճարային հաշվեկշիռների վիճակի վրա:

Բացասական ազդեցության ուժեղացմանը նպաստում էր նաեվ անդամ պետություններից կապիտալի պահպանվող արտահոսքը, ինչը կապված էր ինչպես զարգացող շուկաներից ներդրումային հոսքերի վերակողմնորոշման գլոբալ միտումների, այնպես էլ ընկերությունների կողմից արտաքին պարտքային պարտավորությունների մարման հետ:

Միեվնույն ժամանակ ներմուծման նվազեցման զգալի տեմպերն անդամ պետությունների վճարային հաշվեկշիռների վրա դրական ազդեցություն գործեցին, սակայն ազգային տնտեսությունների բարձր թափանցիկությունը, այդ թվում՝ ազգային արտադրությունների՝ ներմուծվող արտադրանքից կախվածությունը մեծացնում է անդամ պետությունների խոցելիությունը բացասական արտաքին ռիսկերի ազդեցության պայմաններում:

Անդամ պետությունների անցումն առավել ճկուն փոխարժեքների ձեվավորմանը եվ դրան հաջորդած՝ համաշխարհային պահուստային արժույթների նկատմամբ նրանց ազգային արժույթների փոխարժեքների թուլացումը բարձրացրեցին անդամ պետությունների ապրանքների գնային մրցունակությունն արտաքին շուկաներում եվ կրճատեցին մի շարք անդամ պետությունների բյուջեների՝ արտահանման եկամուտների անկումը, ինչպես նաեվ նպաստեցին նրանց միջազգային պահուստային ակտիվների նկատմամբ ճնշումների նվազեցմանը: Միեվնույն ժամանակ անդամ պետությունների ազգային արժույթների փոխարժեքների անկայունությունը հանգեցրեց տնտեսական գործունեության սուբյեկտների՝ արժեզրկման եվ գնաճի ակնկալիքների

բարձրացմանը, Միության ներքին շուկայում ներմուծվող եվ ազգային արտադրանքի գների բարձրացման արագացմանն ու անդամ պետությունների բնակչության իրական եկամուտների:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վարկավորման տեմպերի նվազեցման հետ մեկտեղ նշված գործոններն ազդեցություն գործեցին անդամ պետություններում սպառողական ու ներդրումային ակտիվության եվ ընդհանուր առմամբ ներքին պահանջարկի վրա:

Հայաստանի Հանրապետությունում եվ Ղրղզստանի Հանրապետությունում ներքին պահանջարկի վրա բացասական ազդեցություն ունեցավ նաեվ այն քաղաքացիների կողմից կատարվող դրամական փոխանցումների ծավալի կրճատումը, որոնք աշխատանքային գործունեություն են իրականացնում այլ անդամ պետություններում:

Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եվ Ղրղզստանի Հանրապետության՝ 2015 թվականի տնտեսական զարգացումը 2014 թվականի համեմատությամբ բնութագրվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմամբ՝ համապատասխանաբար 103,5-ից մինչեւ 103,1 տոկոս, 104,4-ից մինչեւ 101,2 տոկոս եւ 104,0-ից մինչեւ 103,5 տոկոս:

Ներքին եւ արտաքին բացասական գործոնների ազդեցության պայմաններում Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում 2015 թվականի արդյունքներով նկատվում է համախառն ներքին արդյունքի նվազեցում՝ մինչեւ, համապատասխանաբար, 96,1 եւ 96,3 տոկոս:

Անդամ պետությունների կառավարությունների եւ ազգային (կենտրոնական) բանկերի կողմից ձեռնարկված միջոցները նպաստեցին ազգային տնտեսությունների վրա արտաքին տնտեսական ոչ բարենպաստ իրադրության ազդեցության մեղմացմանը:

2015 թվականին Միության գործունեության մեկնարկը, որն անդամ պետությունների ինտեգրացիոն գործընթացների խորացման եւ ապրանքների, կապիտալի, ծառայությունների եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար պայմանների ստեղծման հիմքն է, նոր հնարավորություններ ստեղծեց անդամ

պետությունների առեւտրատնտեսական համագործակցության ակտիվացման համար եւ նպաստեց փոխադարձ առեւտրի տեսակարար կշռի ավելացմանը Միության առեւտրի ընդհանուր ծավալում:

Անդամ պետությունների միջեւ արտադրատնտեսական կապերի հետագա զարգացումը մեծացնում է անդամ պետությունների կողմից համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը համակարգելու անհրաժեշտությունը:

Անդամ պետությունների արտահանման հիմնական ապրանքների գների աճի համար նախապայմանների բացակայության ֆոնին արտաքին պայմանների ակնկալվող վատթարացումը պահանջում է արդյունավետ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ անդամ պետությունների համատեղ ջանքերի համախմբում Միության եւ ազգային մակարդակներով, որոնք կուղղվեն անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանը եվ ստեղծված բացասական տնտեսական իրավիճակի հետեւանքների հաղթահարմանը:

Սրա հետ կապված՝ անդամ պետությունների կողմից 2016-2017 թվականներին իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները կուղղորդվեն փոխգործակցության խորացման ապահովմանը եվ անդամ պետությունների համատեղ ջանքերի ակտիվացմանը հետեւյալ ուղղություններով՝

մակրոտնտեսական կայունության ապահովում՝ գնաճի մակարդակի կայունացմանն ուղղված միջոցների ձեռնարկում, անդամ պետությունների բյուջետային համակարգերի հավասարակշռվածության պահպանում, պետական կառավարման հատվածի պարտքային կայունության ապահովում.

տնտեսական աճի կայուն զարգացման եւ վերականգնման համար պայմանների ստեղծում՝ անդամ պետությունների տնտեսությունների բազմազանեցում, ֆինանսական միջոցների աղբյուրների ընդլայնում եւ վարկային ռեսուրսների հասանելիության բարձրացում՝ հիմնական կապիտալում ներդրումների ծավալի ավելացման, փոխադարձ առեւտրի ակտիվացման եւ

Միության ներքին շուկայի զարգացման, արտաքին առեւտրի զարգացման եւ իրացման շուկաների բազմազանեցման նպատակով:

I. Մակրոտնտեսական կայունության ապահովումը

2015 թվականին անդամ պետությունների տնտեսությունների վրա արտաքին տնտեսական անբարենպաստ գործոնների եւ ներքին մակրոտնտեսական անհավասարակշռությունների ապակայունացնող ազդեցությունն ուժեղացավ, ինչն անդրադարձավ Պայմանագրով նախատեսված այն մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացման վրա, որոնցով որոշվում է տնտեսական զարգացման կայունությունը:

Ներմուծվող եւ ազգային արտադրանքի գների ավելացումն անդամ պետությունների շուկաներում 2015 թվականին հիմնականում պայմանավորված էր ազգային արժույթների փոխարժեքների թուլացմամբ, արժութային ռիսկերի բարձրացմամբ եւ տնտեսական գործունեության սուբյեկտների՝ գնաճի ակնկալիքների ավելացմամբ: Մի շարք անդամ պետություններում սպառողական գների աճի մեջ ներդրումը նաեվ հանգեցրեց բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունների սակագների ավելացմանը:

Այս գործոնների ազդեցության ներքո Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կողմից 2015 թվականի արդյունքներով գերազանցվել է Պայմանագրի 63-րդ հոդվածով սահմանված՝ գնաճի մակարդակի հաշվարկային արժեքը (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) համապատասխանաբար 7,1 տոկոսային կետով, 8,7 տոկոսային կետով եւ 7,9 տոկոսային կետով:

Անդամ պետությունների արտահանման հիմնական ապրանքների նկատմամբ պահանջարկի եւ գների նվազեցումը՝ նրանց հիմնական առեւտրային գործընկերների տնտեսությունների աճի տեմպերի դանդաղեցման ֆոնին, բացասական ազդեցություն է գործում անդամ պետությունների բյուջեների եկամտային մասը ձեւավորող մուտքերի աճի տեմպերի վրա:

Հակացիկլային տնտեսական քաղաքականության իրականացման հետ կապված՝ համախմբված բյուջեի ծախսերի աճի տեմպերի գերազանցումը դրա եկամուտների աճի տեմպերի նկատմամբ նպաստեց անդամ պետությունների բյուջետային ոլորտում անհավասարակշռությունների աճին:

Անդամ պետությունների ազգային արժույթների փոխարժեքների նվազեցումը համաշխարհային պահուստային արժույթների նկատմամբ եւ անդամ պետությունների մոտ օտարերկրյա արժույթով պարտքային պարտավորությունների առկայությունը նպաստեցին անդամ պետությունների պետական կառավարման հատվածի՝ օտարերկրյա արժույթով պարտքի գումարի եւ դրա սպասարկման բյուջետային ծախսերի ավելացմանը: Անդամ պետությունների բյուջեների եկամտային մասի նկատմամբ ծախսային մասի ավելացման պայմաններում որոշ անդամ պետություններ ստիպված են կիրառել պարտքային գործիքներ՝ իրենց բյուջեների պակասուրդը ֆինանսավորելու համար:

2015 թվականին բոլոր անդամ պետությունների համար բնորոշ է պարտքային բեռի ավելացումը: Ղրղզստանի Հանրապետությունում պետական կառավարման հատվածի պարտքի մակարդակը հասավ Պայմանագրով սահմանված սահմանային քանակական արժեքին:

Այսպիսով, բոլոր անդամ պետություններում նկատվում են մակրոտնտեսական անկայունության նշաններ, ինչն իր հերթին բացասական ազդեցություն է գործում յուրաքանչյուր անդամ պետության եւ, ընդհանուր առմամբ, Միության տնտեսական զարգացման վրա:

Սրա հետ կապված՝ բոլոր անդամ պետությունները պետք է ընդլայնեն կիրառվող գործիքակազմը եւ ակտիվացնեն մակրոտնտեսական կայունություն ձեռք բերելուն եվ այն պահպանելուն ուղղված ջանքերը հետեւյալ առանցքային ուղղություններով.

գնաճի մակարդակի կայունացմանն ուղղված միջոցների ձեռնարկում, այդ թվում՝

անդամ պետությունների՝ դրամավարկային քաղաքականության իրականացմանն անցնելու ուղղությամբ աշխատանքների շարունակումը՝ գնաճը որպես թիրախ ընդունելու ռեժիմում եւ այդ ռեժիմին անցնելու համար պայմանների ստեղծումը.

գնաճի մակարդակի միջնաժամկետ կողմնորոշիչների սահմանման հետ կապված մոտեցումների մշակումը.

սոցիալական նշանակության ապրանքների եւ ծառայությունների գների զգալի աճի արգելմանն ուղղված մեխանիզմների կատարելագործումը եվ միջոցների իրագործումը, ինչպես նաեւ այդպիսի ապրանքների եւ ծառայությունների ցանկերի թարմացումը.

մրցակցության ընդհանուր կանոնների եւ գների պետական կարգավորման կարգի խախտումների բացահայտումը.

անդամ պետությունների տարածքներում անդամ պետությունների մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության եւ մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխումը.

գնումային եւ ապրանքային միջամտությունների իրականացումն ու զարգացումը՝ որպես սոցիալական նշանակության պարենային ապրանքների գների սեզոնային տատանումների նվազեցման գործիք.

մանրածախ առեւտրի գործիքների ընդլայնումը (էլեկտրոնային առեւտուր, պահեստ-խանութներ, տոնավաճառներ եւ այլն), որոնք ապահովում են ապրանքների իրացումն առավել ցածր գներով եվ բարձրացնում են ապրանքների հասանելիությունն անդամ պետությունների բնակչության համար.

բնական մենաշնորհների ծառայությունների սակագների տնտեսապես հիմնավորված կարգավորումը՝ հաշվի առնելով դրանց սպառողների եւ արտադրողների շահերի հավասարակշռության պահպանումը.

անդամ պետությունների՝ մենաշնորհային կարգավիճակում գտնվող շուկաների վերլուծությունը՝ դրանց օպտիմալ կարգավորման եւ մրցակցային շուկայի հնարավոր ձեւավորման մասով.

անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործումն ակտիվացնելու համար պայմանների ստեղծումը փոխադարձ առեւտրի ոլորտում:

Անդամ պետությունների բյուջետային համակարգերի հավասարակշռվածության պահպանում՝ ներառյալ

անդամ պետությունների բյուջեների եկամտային մասի ավելացումը, այդ թվում՝ հարկային համակարգի կատարելագործման եւ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցով.

մաքսային վարչարարության որակի եւ արդյունավետության բարձրացումը՝ անդամ պետությունների բյուջեներ մաքսային մարմինների կողմից կառավարվող վճարումների մուտքերն ավելացնելու նպատակով.

զարգացման ռազմավարական գերակա ուղղությունների եւ տնտեսության ոլորտների վրա ռեսուրսների կենտրոնացման հաշվին բյուջետային ծախսերի օպտիմալացումը.

բյուջեի անտոկոս ծախսերի աճի տեմպերի շտկումը՝ հաշվի առնելով պետական կառավարման հատվածի բյուջեի առաջացած պակասուրդը (հավելուրդը).

ոչ ֆինանսական ակտիվներով գործառնությունների օպտիմալացումը՝ բյուջետային համակարգերի հավասարակշռության աստիճանը բարձրացնելու նպատակով:

Պետական կառավարման ոլորտի պարտքային կայունության ապահովում՝ ներառյալ

անդամ պետությունների տնտեսությունների համար առավել բարդ ժամանակահատվածներում պիկային բեռնվածությունից խուսափելու համար պարտքերի կառավարման ռազմավարության մշակումն ու իրականացումը՝ պետական կառավարման հատվածի պարտքի ՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքի ցուցանիշը պահպանելու նպատակով.

պետական կառավարման հատվածի վրա պարտքային բեռնվածությունը չավելացնող մեխանիզմների օգտագործման միջոցով առաջնահերթ ծրագրերի ֆինանսավորման հնարավորության քննարկումը.

ներքին աղբյուրների հաշվին բյուջետային պակասուրդի ֆինանսավորման ապահովումը՝ արտաքին շուկայում փոխառությունների ռիսկերը նվազեցնելու համար:

Նշված միջոցների ձեռնարկումը կնպաստի անդամ պետությունների տնտեսական աճի տեմպերի վերականգնման եւ ավելացման համար հիմք հանդիսացող մակրոտնտեսական կայունության ապահովմանը, ինչպես նաեւ դրանց տնտեսությունների՝ արտաքին բացասական ազդեցությունների նկատմամբ կայունության բարձրացմանը:

II. Կայուն զարգացման եւ տնտեսական աճի վերականգնման համար պայմանների ստեղծումը

2015 թվականին արտաքին ապակայունացնող գործոնների, ինչպես նաեւ ներքին մակրոտնտեսական անհավասարակշռությունների ուժեղացումը բացասական ազդեցություն գործեց անդամ պետությունների կայուն տնտեսական զարգացման հեռանկարների վրա եւ հանգեցրեց գործնական ակտիվության դանդաղեցմանն անդամ պետությունների տնտեսությունների առանցքային ոլորտներում:

Անդամ պետությունների հիմնական արտահանվող ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի եւ դրանց գների նվազեցման պայմաններում տնտեսական աճի ավանդական աղբյուրները չեն կարող լիարժեքորեն ապահովել ազգային տնտեսությունների ընթացիկ պահանջներն ու բարենպաստ պայմաններ ստեղծել միջնաժամկետ եւ երկարաժամկետ տնտեսական զարգացման համար:

Սրա հետ կապված՝ անդամ պետությունների համար չափազանց կարեւոր խնդիր է տնտեսական աճի ներքին աղբյուրների զարգացումը Միության շրջանակներում տնտեսական ինտեգրման հնարավորությունների առավելագույն օգտագործման պարագայում անդամ պետությունների արտադրական ներուժի ավելացման, բազմազանեցման եւ իրագործման միջոցով:

Ներքին արտադրության ծավալների ավելացման եւ արտադրողականության բարձրացման համար անդամ պետությունների բյուջեների սահմանափակ լինելու պայմաններում անհրաժեշտ է խթանել ներդրումների հոսքը տնտեսության իրական ոլորտ եւ բազմազանեցնել ֆինանսական ռեսուրսների ներգրավման աղբյուրները, որոնք թույլ են տալիս ձեռնարկություններին ներդրումներ կատարել հիմնական միջոցների ստեղծման եւ վերարտադրման մեջ: Սա լրացուցիչ հնարավորություններ կստեղծի արտադրական հզորությունների վերազինման եւ արդիականացման համար՝ ներմուծումից կախվածությունը նվազեցնելու եվ անդամ պետությունների՝ բարձր ավելացված արժեքով ազգային արտադրանքն ու կոոպերատիվ հիմունքներով արտադրված արտադրանքն արտաքին շուկա դուրս բերելու նպատակով:

Միությունում արտադրվող արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը եվ անդամ պետությունների՝ երրորդ երկրների հետ առեւտրատնտեսական հարաբերությունների ապրանքային եւ աշխարհագրական բազմազանեցման խթանումը, ինչպես նաեւ մաքսային կարգավորման կատարելագործումն ու տարանցիկ եւ խառը փոխադրումների զարգացումը կնպաստեն անդամ պետությունների արտահանման ներուժի օգտագործմանը եվ անդամ պետություններին թույլ կտան ոչ միայն ավելացնել արժութային մուտքերի ծավալները, այլեվ արտադրության եւ իրացման գլոբալ շղթաներում առավել ակտիվ ներգրավման հաշվին ընդլայնել ազգային արտադրության զարգացման հնարավորությունները:

Անդամ պետություններում տնտեսական գործունեության ակտիվացմանը զգալի խթան կարող են հաղորդել փոխադարձ առեւտրի զարգացումն ու անդամ պետությունների տնտեսությունների համար առավել կարեւոր ոլորտներում փոխգործակցության ամրապնդումը, այդ թվում՝ միասնական թվային տարածքի ձեւավորման եւ օգտագործման հաշվին: Միության ինտեգրացիոն հնարավորությունների օգտագործումը, այդ թվում՝ ընդհանուր եւ միասնական շուկաների հետագա ձեւավորումը տնտեսության այդ ոլորտներում, ինչպես նաեւ անդամ պետությունների ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ

աշխատուժի տեղաշարժի առումով փոխադարձ հասանելիության խոչընդոտների, առգրավումների եւ սահմանափակումների հայտնաբերումն ու դրանց վերացումը կնպաստեն այս ուղղությամբ արդյունավետ եւ փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

Սահմանված խնդիրների լուծման համար 2016 - 2017 թվականներին անդամ պետությունները պետք է Միության շրջանակներում իրագործեն հետեւյալ համատեղ եվ ազգային միջոցները:

Անդամ պետությունների տնտեսությունների բազմազանեցում՝ ներառյալ տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների որոշումը.

երրորդ երկրներից արտադրանքի ներմուծումը Միության արտադրանքով փոխարինելու քաղաքականության իրագործումը, այդ թվում՝ անդամ պետությունների արդյունաբերական համալիրների զարգացման միջոցով.

նորարարական ակտիվության խթանումը եւ նորարարական տեխնոլոգիաների ներմուծման համար պայմանների ստեղծումը.

անդամ պետությունների գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական համատեղ աշխատանքների անցկացումը կազմակերպելու մեխանիզմների մշակումը՝ բարձր տեխնոլոգիական արտադրության, այդ թվում՝ ագրոարդյունաբերական համալիրի բնագավառում զարգացումը խթանելու նպատակով.

փոքր եւ միջին բիզնեսի աջակցության համալիր միջոցների իրականացումը.

անդամ պետությունների տնտեսությունների վրա ինտեգրացիոն գործընթացների մակրոտնտեսական եւ ճյուղային ազդեցության գնահատման սկզբունքների եւ մոտեցումների մշակումն ու համաձայնեցումը:

Ֆինանսական միջոցների աղբյուրների ընդլայնում եւ վարկային ռեսուրսների հասանելիության մեծացում՝ հիմնական կապիտալում ներդրումների ծավալներն ավելացնելու նպատակով՝ ներառյալ

առաջնահերթ ծրագրերի համար ֆինանսական միջոցների նպատակային հատկացման արդյունավետ մեխանիզմների հետագա զարգացումը.

անդամ պետությունների՝ պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման ոլորտը կանոնակարգող օրենսդրության կատարելագործումը՝ հաշվի առնելով լավագույն միջազգային գործելակերպերը, անդամ պետությունների առավել առաջադիմական մոդելները, երրորդ երկրների եւ ինտեգրացիոն միավորումների լավագույն փորձը.

անդամ պետությունների ներքին շուկաներում փոխառությունների ակտիվացումը, այդ թվում՝ Միության կապիտալի ընդհանուր շուկայի հնարավորությունների օգտագործումը.

Միջազգային կազմակերպությունների վարկանիշներում անդամ պետությունների դիրքերի առաջխաղացում ապահովող միջոցների իրագործումը, այդ թվում՝ անդամ պետությունների տնտեսությունների ներդրումային գրավչությունը բարձրացնելու նպատակով ինտեգրացիայի շրջանակներում նշանակալի հարցերի շուրջ փորձի փոխանակման միջոցով.

երկարաժամկետ բանկային վարկավորման համար պայմանների ստեղծումը, այդ թվում՝ անդամ պետությունների ազգային արժույթներով երկարաժամկետ խնայողությունների գրավչության բարձրացման միջոցով.

զարգացման տարածաշրջանային կառույցների ֆինանսական հնարավորությունների օգտագործման ակտիվացումը (Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամ, Եվրասիական զարգացման բանկ):

Փոխադարձ առեւտրի ակտիվացում եւ Միության ներքին շուկայի զարգացում՝ ներառյալ

Միության ներքին շուկայի գործունեության փոխադարձ հասանելիությանը խոչընդոտող արգելքների, ինչպես նաեւ ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի հետ կապված առգրավումների եւ սահմանափակումների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքների շարունակումը.

անուղղակի հարկերի գանձման համակարգի կատարելագործման հետ կապված մոտեցումների համաձայնեցման մասով, այդ թվում՝ դրանց վճարումից խուսափելու դեպքերի կանխարգելմանն ուղղված աշխատանքների շարունակումը.

Եվրասիական տնտեսական միության միասնական թվային տարածքի ձեւավորմանն ուղղված առաջարկությունների մշակումը,

անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի զարգացման համատեղ կանխատեսման նախապատրաստումը.

գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով անդամ պետությունների պահանջարկի ու առաջարկի կանխատեսումների նախապատրաստումը.

ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձեւավորմանն ուղղված միջոցառումների սահմանման մասով աշխատանքների եզրափակումը, այդ թվում՝ դրանց իրագործման մեկնարկը.

Միության գազի ընդհանուր շուկայի, Միության նավթի եւ նավթամթերքների ընդհանուր շուկաների ձեւավորման նպատակների, սկզբունքների եւ խնդիրների սահմանման մասով աշխատանքների եզրափակումը.

Միության գազի ընդհանուր շուկայի, Միության նավթի եւ նավթամթերքների ընդհանուր շուկաների ձեւավորմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

Միության գազի, նավթի եւ նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսումային) հաշվեկշիռների մշակումը՝ ընդունված մեթոդաբանության հիման վրա:

Արտաքին առեւտրի զարգացումը եւ իրացման շուկաների բազմազանեցումը՝ ներառյալ

համաշխարհային շուկայում Միության շահերի առաջխաղացմանն ուղղված՝ երրորդ կողմերի հետ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացումը.

երրորդ կողմերի հետ ազատ առեւտրի մասին համաձայնագրեր կնքելու շուրջ բանակցությունների, ինչպես նաեւ անդամ պետությունների առեւտրային

գործընկերների հետ անդամ պետությունների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքների շարունակումը, որոնք ուղղված են այդպիսի համաձայնագրեր կնքելու նպատակահարմարության ուսումնասիրությանը.

կոոպերատիվ հիմունքներով արտադրված արտադրանքի արտահանմանը նպաստող վարկավորման, ապահովագրման ու աջակցության այլ մեխանիզմների զարգացումը եւ իրագործումը.

երրորդ կողմերի հետ՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու համար պայմանների ստեղծումը.

տարանցիկ եւ խառը փոխադրումների զարգացումը՝ բեռների առաքումն արագացնելու եւ տրանսպորտային ծառայությունների որակը բարելավելու նպատակով.

Միության եւ Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտու շինարարական գործընթացների փոխկապակցման շրջանակներում տրանսպորտի ու ենթակառուցվածքի բնագավառում անդամ պետությունների կողմից համատեղ ծրագրերի իրագործման համար պայմանների ստեղծումը՝ ապահովելով անդամ պետությունների համար առավելագույն հասանելի ծրագրերի առաջնահերթությունը.

մաքսային կարգավորման կատարելագործումը՝ ուղղված արտաքին տնտեսական գործունեություն վարելու պայմանների բարելավմանը, մաքսային գործառնությունների իրականացման կարգի օպտիմալացմանը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրմանը, անդամ պետությունների եւ, ընդհանուր առմամբ, Միության տարանցիկ ներուժի զարգացմանը.

մաքսային տարանցման դեպքում Միության շրջանակներում միասնական երաշխիքային մեխանիզմների կատարելագործումը.

անդամ պետություններում վարչական, կազմակերպական եւ իրավական պայմանների ստեղծումը՝ անդամ պետությունների «մեկ պատուհանի» ազգային մեխանիզմների հետագա զարգացման ու մոտարկման համար.

պետական հսկողության ձեւերի արդյունավետությունը բարձրացնելիս արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պետական ընթացակարգերի իրագործման հետ կապված աշխատանքային, ժամանակավոր եւ ֆինանսական ծախսերի կրճատմանն ուղղված միջոցների իրագործումը:

Նշված համալիր միջոցների իրագործումը կնպաստի անդամ պետությունների տնտեսությունների՝ կայուն տնտեսական աճի հետագծին վերադառնալուն՝ դրանց ներքին հնարավորությունների ակտիվացման եւ բազմազանեցման ու Միության տնտեսական ինտեգրման ներուժի օգտագործման հաշվին: